ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ԳԱՎԱՌԸ 1919-1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՔԱՌՅԱՆ Ս. Մ.

Ըստ պատմական աղբյուրների, Մեծ Ղարաքիլիսայի գավառն անվանվել է Տանձուտ, այնուհետև՝ Ղարաքիլիսա (Սև եկեղեցի): 1639 թ. Մեծ Ղարաքիլիսան արդեն գյուղաքաղաք էր: 1918 թ. կազմավորվեց Ղարաքիլիսայի գավառը, որի մեջ մտան Ալեքսանդրապոլի նահանգի առաջին տեղամասը և Բորչալուի ու Լոռու տեղամասերը, իսկ Հայաստանի Հանրապետության 1919 թ. մայիսի 23-ի օրենքով Մեծ Ղարաքիլիսան ստացավ քաղաքի կարգավիճակ: Երբ 1920 թ. մայիսի 25-ին Հայաստանի Հանրապետության տարածքը բաժանվեց չորս նահանգի, Ղարաքիլիսան ամբողջությամբ մտավ Շիրակի նահանգի մեջ[1]:

Գավառի բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն էր, հողագործությունը, արհեստն ու առևտուրը: 1831 թ. Մեծ Ղարաքիլիսան ունեցել է 494, 1873 թ.՝ 2017, 1897 թ.՝ 3917 բնակիչ[2]:

Ղարաքիլիսայի գավառը Հայաստանի առավել բարեկեցիկ երկրամասերից էր, սակայն 1918 թ. գարնանը թուրքական արշավանքների և շուրջ կես տարի թուրքական զորքերի՝ Լոռում մնալու ընթացքում այստեղ զավթիչների կողմից կատարվեցին անօրինակ գազանություններ ու ավերածություններ: Ինչպես վկայում է օսմանյան զորահրամանատարության մոտ Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց նախարարության ներկայացուցիչ Գ. Խոյեցյանը, «Ղարաքիլիսայի և Լոռու շրջաններից մեզ հասած ստույգ տեղեկությունները վկայում են, որ տաճիկները…իրենց հետ տարել են այն ամենը, ինչ հնարավոր է եղել, թողնելով ազգաբնակչությանը անծայր չքավորության մեջ, սովի և ֆիզիկական բնաջնջման հեռանկարի առաջ: Իմ կողմից աննպատակահարմար և անօգուտ համարելով դիմել այդ առթիվ Խալիլ փաշային, կարծում եմ, որ անհրաժեշտ է կազմել պաշտոնական հանձնաժողով, մասնակցությամբ չեզոք պետությունների ներկայացուցիչների, տեղում ստուգելու ավերվածությունների փաստը, չափը, բնույթը քննության արձանագրությունը ընդհանուր խաղաղության կոնֆերանսին ներկայացնելու համար»[3]:

Այս նպատակով կազմվում է մի ներկայացուցչական հանձնաժողով՝ Փամբակի և Լոռու շրջանների ազգաբնակչության քանակի և հասցված նյութական վնասների որոշման համար: Այս հանձնաժողովի 1919 թ. առաջին եռամսյակում գրած զեկուցագրում մանրամասն նկարագրվում է Մեծ Ղարաքիլիսայում և ամբողջ Լոռու և Փամբակի բնակավայրերում տիրող իրավիճակը: Այնտեղ կարդում ենք. «Կոմիսիան հասավ Մեծ Ղարաքիլիսա (1918 թ.) դեկտեմբերի 8-ին, հայ-վրացական պատերազմի նախօրյակին: Այս հանգամանքն ունեցավ շատ բացասական հետևանքներ կոմիսիայի գործունեության համար: Պատերազմի հետևանքով երթե-

---

[1] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ., 199, ց. 1, գ. 160, թ. 134:

[2] Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Ե., 1991, էջ 149:

[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 661, թ. 4:

վեկությունը երկաթուղու գծի վրա դադարեց մոտ երեք ամիս, և կոմիսիան ժամանակին չստացավ ո՛չ խոստացված դրամը, ո՛չ բլանկները և ո՛չ էլ լուսանկարչական թուղթը, որը չափազանց անհրաժեշտ էր Ղարաքիլիսայի շրջակայքում ցրված դիակույտերը լուսանկարելու համար»[4]:

Հանձնաժողովի զեկուցագրում այնուհետև նշվում է, որ թուրքական հրամանատարությունը նպատակ է ունեցել տնտեսապես քայքայել և ֆիզիկապես ոչնչացնել հայ ազգաբնակչությանը, ընդ որում, խիստ կարգապահությամբ աչքի ընկնող թուրքական զորքերի իրագործած կոտորածները եղել են ծրագրված ու կազմակերպված և պաշտոնապես տևել են երեք օր:

Ղարաքիլիսայի գավառից բռնությամբ կամ խորամանկությամբ թուրքերը հարյուրավոր մարդկանց խմբերով հավաքել են և գյուղերից դուրս հանելով՝ գնդակահարել կամ սվինահարել:

Ղարաքիլիսայում սպանվել են բոլոր այն հայ սպաներն ու զինվորները, որոնք կամ գերի են ընկել կամ էլ ապավինել են հաղթողի ողորմածությանը: Վերջիններս միամտություն էին ունեցել կարծելու, որ իրենք կհամարվեն ռազմագերիներ և թաքստոցներից դուրս գալով ներկայացել էին թուրք պարետին:

Տեղացիներից բացի, Ղարաքիլիսայում կոտորվել էին բազմաթիվ գաղթականներ՝ Կարսի և Ալեքսանդրապոլի շրջաններից:

Ըստ այս զեկուցագրի, բռնությունները տարաբնույթ և այնքան քստմնելի են եղել, որ դրանց նկարագրությունն իսկ անպատշաճ կլիներ:

Թալանի էր ենթարկվել այն ամենը, ինչ կարելի էր թալանել՝ դրամ, թանկարժեք իրեր, կահ-կարասի, հագուստեղեն, սննդամթերք և այլն: Քանի որ Փամբակի ազգաբնակչությունը հանկարծակիի եկավ և գրեթե ոչինչ չէր թաքցրել, ուստի ամեն ինչ կորցրեց: Բնակչության դրամը և թանկարժեք իրերը անցել էին թուրք ասկյարների ձեռքը՝ խլվելով, իսկ շատ դեպքերում էլ որպես փրկագին՝ մահից և բռնությունից ազատվելու կամ էլ □օրենքի□ խստությունից խուսափելու համար: Թուրքերը թալանել էին Փամբակի գրեթե բոլոր անասունները՝ ջոկելով ջահել ու առույգ անասուններին: Նրանք տարել էին նաև եղած գրեթե ամբողջ գրաստը: Այսպիսով, Փամբակը, որը հարուստ շրջան էր համարվում, զրկվել էր իր անասունների մեծագույն մասից: Չնայած դրան, պարենային ճգնաժամի և վերահաս սովի պատճառով մնացած անասունները մորթվում էին: Այսպիսով, թուրքերի հեռանալուց հետո էլ անասունների ոչնչացումը մեծ արագությամբ էր ընթանում, ինչը սպառնում էր իսպառ անասնազրկել գավառը[5]:

Նույն զեկուցագրում նշվում էր, որ Փամբակում 1918 թ. առանձնապես մեծ հողատարածություններ էին ցանվել, սակայն գյուղացուն վիճակված չէր իր ցանածի մեծ մասը հնձել: Ցանքսերի մեծ մասը տրորվեց ձիերի սմբակների տակ, մի մասը թուրքերն արածացրին, իսկ փրկվածի 3/8 մասն էլ, իբրև բահրա, թուրք իշխանությունը տասնյակ վագոններով դուրս տարավ երկրից:

Գյուղատնտեսության երրորդ ճյուղը մեղվապահությունն էր, որը նույնպես իսպառ վերացվեց:

---

[4] Նույն տեղում, ֆ. 205, ց. 1, գ. 774. թ. 31:

[5] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 99, թ. 6-7:

Հիմնավորապես ոչնչացվեցին դպրոցական գույքը, գրադարանները, կոոպերատիվները, աննշան բացառությամբ թալանվել և սրբապղծվել էին բոլոր եկեղեցիները: Գավառում չէին գործում ոչ մի դպրոց ու կոոպերատիվ, իսկ մշակութային կյանքին հասցված հարվածն անչափելի էր[6]: Սակայն հանձնախմբի ներկայացրած տվյալները չէին տալիս վնասների իրական պատկերը: Պատկերը լրացնելու համար պետք է ավելացնել, որ թուրք ասկյարները հինգ ամիս ապրել էին գյուղացիների հաշվին և, բառի իսկական իմաստով, ոչնչացրել էին ոչխարներն ու հավերը, սպառել մեծ քանակությամբ ձու, պանիր, կաթ և կաթնամթերք[7]:

Մեծ Ղարաքիլիսայի քաղաքային և ինքնավարության խորհրդի նախագահ Անուշավան Ղազարյանը 1920 թ. հուլիսի 2-ին ՀՀ խնամատարության և վերաշինության նախարարին գրած դիմումում հայտնում է. «Ի նկատի ունենալով, որ Մեծ Ղարաքիլիսան այժմ արդեն քաղաք է, իսկ մինչ այժմ Մեծ Ղարաքիլիսայի ազգաբնակչությունը օգտվում էր ամբողջ շրջանին բաց թողնված մթերքների ընդհանուր գումարից, ուստի թյուրիմացություններից խուսափելու համար խնդրում եմ օգնության գալ քաղաքային խորհրդին՝ անելով համապատասխան կարգադրություն Մեծ Ղարաքիլիսայի ներկայացուցիչներին զատելու շրջանին բաշխվող մթերքների ընդհանուր թվից 7800 հոգու հասանելիք մթերքները (գլխավորապես՝ ալյուրը)»[8]:

Ղարաքիլիսայի գավառապետն էր Ս. Տեր-Սարգսյանը: Գավառի ղեկավարությունը հոգ էր տանում տեղի բնակչության օգնության համար և, միայն 1919 թ. սկզբին, ժողովրդին բաժանեց 46932 փութ սերմացու[9]:

Կարևոր էր Կարմիր խաչի ճյուղի հիմնումը Ղարաքիլիսայում: Ինչպես տեսնում ենք, Ղարաքիլիսայի գավառում կյանքն ընթանում էր առաջ, բայց կային բազմաթիվ խանգարող հանգամանքներ: Դրանցից էր Մեծ Ղարաքիլիսայում 11098 գաղթականի առկայությունը: Բացի այդ, Ղարաքիլիսայի, Ջալալ-օղլու, Համամլուի և Դսեղի շրջաններում կար 26443 գաղթական[10]: Այս հանգամանքն ավելի էր ծանրացնում տեղի իշխանությունների խնդիրը:

Քայքայված տնտեսության վերականգնման մտահոգությամբ Ղարաքիլիսայի գավառի գյուղատնտես Արտյոմ Թայիրյանը 1920 թ. մայիսի 4-ին Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության և պետական գույքի նախարարին գրում էր. «Զեկուցագրիս նպատակն է հրավիրել Ձեր ուշադրությունը գյուղատնտեսական հաստատություններից երկուսի, այն է՝ սերմնաբուծարանի և տնկարանի վրա, որոնց կազմակերպելու գործը ես պատրաստ եմ ինձ վրա վերցնել՝ իբրև պետական գավառային գյուղատնտես, եթե Դուք կբարեհաճեք տալ ինձ այդ պաշտոնը:

---

[6] Նույն տեղում, ֆ. 207. ց. 1, գ. 206, թ. 28:
[7] Բանբեր Հայաստանի արխիվների, 1996, N 1, էջ 97-104:
[8] ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 835, թ. 1:
[9] Նույն տեղում, ֆ. 203, ց. 1, գ. 205, թ.1:
[10] Նույն տեղում, ֆ. 205, ց. 1, գ. 775, թ. 25:

Այդ դեպքում պաշտոնավայր կընտրվի Փամբակի Ղարաքիլիսան՝ հետևյալ դիտավորություններով: Փամբակը, և մասնավորապես, Ղարաքիլիսան, իմ ծննդավայրն է»[11]:

Այս շրջանում Հայաստանը բարձր գներով տնկիներ ու սերմեր ձեռք էր բերում հիմնականում Վրաստանից և հարավային Ռուսաստանից, մինչդեռ մեր տեղականն առավել բերքատու էր ու դիմացկուն, և տեղի բնակլիմայական պայմաններին համապատասխան: Սակայն թուրքերը լրիվ ավերել ու ոչնչացրել էին ամեն ինչ:

Ա. Թայիրյանը գտնում էր, որ գավառում սոցիալական լարվածությունը կթուլացվի թե՛ պետական և թե՛ մասնավոր հատվածներում գյուղատնտեսության զարգացումով, որ անհրաժեշտ է բոլորին օգնել ու ընդառաջել, միայն թե հողը բերք տա, իսկ անասուններն էլ լինեն առավել կաթնատու և մսատու: Նա կառավարության ուշադրությունն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ հայերը բազմաթիվ օրինակելի տնտեսություններ են հիմնել հարևան Վրաստանում ու Ադրբեջանում, մինչդեռ «մեր հայրենիքը զուրկ է ամենատարրական, բայց և խիստ անհրաժեշտ ձեռնարկություններից»[12]:

Պակաս հետաքրքիր չէ նաև հանրային կրթության և արվեստի նախարարության տարրական դպրոցների վարիչին ուղղված զեկուցագրերից մեկի բովանդակությունը: Դրա հեղինակը հայտնում է, որ 1919 թ. նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 6-ը շրջագայել է Ղարաքիլիսայի, Ջալալ-օղլիի և Դսեղի պետական դպրոցներում և ներկայացնում է այդ դպրոցներում տիրող ծանր վիճակը: Ըստ նրա, իր շրջագայած բնակավայրերում չկան դպրոցական շենքեր, պարապ-մունքներն անց են կացվում մասնավոր շենքերում, իսկ եղած շենքերը տրամադրվել են Արևմտյան Հայաստանից գաղթած որբերին: Դրանից ելնելով՝ նա խնդրում էր, որ որբանոցների համար գնվեն նոր շենքեր, իսկ նախկին դպրոցական շենքերը վերատրամադրվեն դպրոցներին[13]:

Ղարաքիլիսայի գավառի ծանր վիճակն է նկարագրում այդ գավառի վիճակագիր Խաչատրյանի 1920 թ. հուլիսի 28-ի բաց նամակը՝ հղված ՀՀ խնամատարության և գյուղատնտեսության նախարարին: Նա հայտնում է գավառի աշխատավորության ծանր վիճակի մասին և նշում է, որ չկան հաց, ձավարեղեն, և բնակչությունը սովամահ է լինում: Նա հայտնում է, որ Յաղուբլու (Գուգարք) և Սարմսախլի (այժմ անմարդաբնակ) գյուղերում վերջին մի քանի ամսում սովից մահացել են 30-ից ավելի մարդ, բնակչությունն ուժասպառվել և կմախք է դարձել, սնվում է կանաչիով: Խաչատրյանը նշում է, որ հայ գյուղացին մեր երկրորդ բանակն է, պետք է կերակրվի, որ լավ աշխատի, մինչդեռ այժմ նրա վիճակն աննախանձելի է[14]:

Այսպիսով, չնայած Ղարաքիլիսայի գավառը հեռու էր 1920 թ. թուրք-հայկական պատերազմի թատերաբեմից, երկրի ընդհանուր վիճակը իր

---

[11] Նույն տեղում, ֆ. 203, ց 1, գ.205, թ.1:

[12] Նույն տեղում, թ. 22:

[13] Նույն տեղում, գ. 206, թ. 28-29:

[14] Նույն տեղում, ֆ. 203, ց 1, գ. 306, թ. 25-28:

կնիքն էր դնում նաև այդ տարածաշրջանի վրա: Խորանում էր տնտեսական և քաղաքական ճգնաժամը:

Այս էր վիճակը Ղարաքիլիսայի գավառում՝ ամբողջ 1919-1920 թթ. ընթացքում:

КАРАКИЛИССКИЙ УЕЗД В 1919-1920 ГОДАХ

КАРЯН С. М.

Резюме

В годы Первой Республики Армении Каракилисса переживала социальные и экономические трудности, обусловленные турецкой оккупацией и наличием беженцев (11098 беженцев). Каракилисский уезд по своему социальному положению не отличался от других регионов республики. Так или иначе, местные организации делали все, чтобы жизнь провинции вошла в свое естественное русло.